

ՀԱՅ-ՈՌԻՍԱԿԱՆ զՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Պատմաքաղաքական բազմաթիվ իրադարձություններով պայմանավորված՝ հայ նոր գրականության զարգացման եւ կայացման գործում նկատելի է ռուս գրականության ազդեցությունը: Ոգեշնչվելով ԺԸ.—ԺԹ. դդ. արդեն իսկ դասական համարվող գործիչների հեղափոխական, լուսավորական գաղափարներից՝ հայ ստեղծագործողներից ոմանք իրենց երկերի գրական սեռով եւ տեսակով, պարունակած նյութով, կառուցվածքային եւ այլ գծերի անդրադարձումներով դարձան այդ գաղափարների տարածողները հայ իրականության մեջ: Գրականությանը համընթաց՝ այս շրջանում բարձր նշանակ է սահմանում նաեւ ռուսական գրաքննադատությունը, որի ներկայացուցիչների լուսավոր գաղափարները ոչ միայն բարձր են գնահատել հայ մշակույթի գործիչները, այլեւ մեծապես նպաստել են հայ գրական քննադատության ձեւավորմանն ու հարստացմանը:

Բանասիրական գիտությունների թեկնածու, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ Կարեն Խանյանի նոր գիրքը՝ «Ռուսական գրական քննադատությունը XIX դարի հայ քննադատական մտքի գնահատմամբ», շարունակում է հայ-ռուսական գրական կապերին նվիրված հեղինակի նախորդ աշխատությունների («Վ. Զվյագինցեւան եւ հայ գրականությունը», «Ռուս գրականությունը եւ հայ քննադատական միտքը XIX—XX դարերում», «Ռուսական պոեզիան XIX դարի հայ քննադատական մտքի գնահատմամբ», «Հովհաննես Թումանյանը եւ ռուսական պոեզիան») նպատակային ուղղվածությունը՝ ցույց տալ համաշխարհային գրական-մշակութային գանձարանի հարստացման համար ծանրակշիռ ազդեցություն ունեցած ռուս գրականության, գրաքննադատության գրական ազդեցությունը հայ հեղինակների ստեղծագործական գործունեության վրա:

2025-ին տպագրված¹ գրքում հեղինակն առաջնահերթ ներկայացրել է ռուսական քննադատության զարգացման ընթացքը՝ մանրամասն

¹ Պոլիգրաֆ Հրատ., Երեւան, 116 էջ:

նկարագրելով ԺԸ. դարավերջին իր ուղին սկսած եւ Ի. հարյուրամյակում բարձրակետին հասած այս ուղղության կարեւորագույն ներկայացուցիչների գործունեության մանրամասները: Ն. Կարամզին, Ի. Դմիտրիեւ, Ա. Մերգլյակով, Գ. Դերժավին, Ի. Կռիլով, Ա. Ռադիշչեւ, միաժամանակ Վ. Ժուկովսկի, Կ. Բատյուշկով, Վ. Կուխելբեկեր, Ա. Պուշկին, Ա. Գրիբոյեդով, Պ. Կատենին — գործիչներ, որոնց գեղարվեստական գործերում ու քննադատական աշխատություններում կա՛մ նկատվում են ռեալիզմի կիրառման դրսևորումներ, կա՛մ էլ տարբեր մակարդակներով կրում են անցյալ դարերի ավանդույթների ազդեցությունները: Ըստ մենագրության հեղինակի՝ «Առաջընթացն այլընտրանք չուներ»:

Կ. Խանյանը մանրամասն ներկայացնում է ԺԹ. դարի սկզբին հանդես եկած կանոնակարգված գրականության տեսաբաններին ու քննադատներին, որոնք տարբեր ձեւակերպումներով էին բնորոշում քննադատությունը. «Քննադատությունը ճշմարիտ դատողություն է ինչ-որ բանի մասին» (Ն. Յանովսկի), «Քննադատությունը դատողություն է՝ գրական երկի «վատ ու լավ կողմերի մասին» (Յ. Գալինկովսկի), «Քննադատությունը պետք է պայքարի հասարակության արատների դեմ, խորհուրդներ տա «գեղեցկության մեղսանքները» փոփոխելու համար, օգտակար լինի բարեմիտ, բարեվայելուչ, արդար եւ անաչառ արվեստի «զարգարանքներին»» (Ե. Ստանեւիչ) եւ այլն: Խոսելով Ա. Մերգլյակովի քննադատական հայացքների մասին, Կ. Խանյանը ընդգծում է, որ նա Ռուսաստանում առաջիններից մեկն է, որ փորձել է քննադատությունը դնել գիտական հիմքերի վրա՝ նկատելով, որ այդ գործիչը չի կարողացել ամբողջությամբ կտրվել դասականությունից (Classicism) եւ Կարամզինի օրինակով ստեղծագործության հիմքը համարել է զգացմունքը, ոչ թե բանականությունը:

Ռուսական քննադատական մտքի զարգացման գործում գրքի հեղինակը հատկանշական է համարում ԺԹ. դարի առաջին երեք տասնամյակների ամսագրային քննադատությունը եւ մանրամասն ներկայացնում է այս շրջանում ռուսական «շուկայում» գործող ամսագրերում արժարժված առաջադիր քննադատական հայեցակարգերն իրենց ուղղություններով եւ նյութի ընդգրկվածությամբ: Վ. Իզմայլովի «Патриот», Ի. Կռիլովի «Почта духов», Ա. Շախովսկու «Драматический вестник» ամսագրերը, Վ. Դմիտրիեւի «Ореады», Ի. Մարտինովի «Северный вестник», Ա. Իզմայլովի «Цветник» եւ այլ ամսագրեր ու պարբերականներ տպագրում էին քննադատական բովանդակության հոգվածներ, գրախոսություններ՝

տարբեր ընդգրկումներով: Նշենք նաեւ, որ Կ. Խանյանի ուսումնասիրությունը հիմնված է մանրակրկիտ ու համապարփակ տեղեկատվական փաստերի վրա. հեղինակը ծանոթ է ուսումնասիրվող նյութի բնագրերին՝ սկսած վերը նշված պարբերականներից, մինչեւ ԺԸ. դարում Ռուսաստանում հրատարակված քննադատությանը վերաբերող ուսումնական գրականություն, ինչի արդյունքում կարողացել է այս ամենի արձագանքները փնտրել ու գտնել ԺԹ. դարի հայ քննադատական մտքի ժառանգության մեջ: Աշխատությունն արժեքավոր է ոչ միայն գրական քննադատության, այլեւ գրականության տեսության տեսանկյունից, քանի որ Կ. Խանյանը համակարգել է ժամանակագրական սկզբունքով դիտարկել գրական տարբեր ուղղությունների, սեռերի մասին՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում տպագրված դասագրքերը, երկերն ու նյութերը: Այս առումով թերեւս կարելի է ասել աշխատության առաջին՝ պատմական ակնարկի մասը յուրօրինակ մատենագիտություն է՝ ԺԸ. դարավերջի եւ ԺԹ. հարյուրամյակի ռուս բանասիրության, պատմագրության, լեզվաբանության, գրականության պատմության, ինչպես նաեւ գրական տարբեր ուղղությունների (դասականություն, զգայապաշտություն, ապագապաշտություն, իրապաշտություն) ուսումնասիրությամբ զբաղվողների համար:

Գրքի արժանիքներից է ռուսական գրական քննադատության կարկառուն ներկայացուցիչների հայացքների ու գաղափարների անփոփ ներկայացումը, ինչն օգտակար է կիրառելի կլինի քննադատության հետաքրքիր ճանապարհը ընտրած բանասերների համար: Ն. Կարամզինի, Վ. Ժուկովսկու, Ն. Պոլեույի (որն, ըստ Կ. Խանյանի, առաջիններից մեկն է Ռուսաստանում, որ լրագրությունը-քննադատությունը դարձրել է իր մասնագիտությունը) քննադատական հայացքներն այսօր եւս չեն կորցրել իրենց արդիականությունն ու հետաքրքրությունն են առաջացնում:

Պատմական ակնարկից հետո Կ. Խանյանն առանձին գլուխներով անդրադարձել է ԺԹ. դարի ռուսական երեք նշանավոր քննադատների՝ Վ. Բելինսկու, Ն. Դոբրոլյուբովի եւ Ն. Չերնիշևսկու գործունեությանն ու դրանց գնահատմանը հայ քննադատական մտքի դիրքերից, որ ամբողջացրել է այս կամ այն գաղափարի կամ հայեցակարգի մասին հեղինակային մեկնաբանություններով ու տեսակետներով:

«Վ. Գ. Բելինսկին աստվածանվեր հայտնություն էր ոչ միայն ռուսական, այլեւ համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Որպես իր

մայր ժողովրդի հասարակական մտքի ու գրականության գերաստղերից մեկը՝ նա իր տաղանդն անմնացորդ նվիրաբերել է ռուսական ինքնուրույն գեղարվեստական գրականության զարգացմանը», - գրում է Կ. Խանյանը (էջ 43) քիչ ավելի ուշ՝ 1860-ական թթ. հանդես եկած հեղափոխական դեմոկրատներ Չերնիշևսկու եւ Դոբրոլյուբովի նախորդ եւ ուսուցիչ Բելինսկու մասին: Հսկայական է վերջինիս ազդեցությունը մյուս ժողովուրդների, այդ թվում եւ հայ ժողովրդի հասարակական մտքի եւ գրականության զարգացման վրա. նրա երկերից առանձին հատվածներ թարգմանվում ու տպագրվում էին հայ մամուլի էջերում: «Հայ գրողներն ու քննադատները գրական վեճերի ժամանակ դիմում են մեծ քննադատի ժառանգությանը, աշխատում են նրա հեղինակությանը՝ հիմնավորել իրենց տեսակետները, պաշտպանվել հակառակորդից կամ հակահարձակ լինել», - ամփոփելով ժամանակաշրջանի հայ մամուլում տեղ գտած փաստերը՝ եզրակացնում է հեղինակը (էջ 47): Անդրադառնալով Բելինսկուն նվիրված տարբեր ստեղծագործողների տեսակետներին՝ մամուլում՝ հատկապես «Մշակ» եւ «Տարազ» հանդեսներում տպագրված նյութերին, հեղինակը հատկապես շեշտում է Նիկոլ Աղբալյանի՝ Բելինսկու գործունեության եւ հայացքների նկատմամբ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքը: 1898 թ., Բելինսկու մահվան հիսնամյակի առթիվ «Մուրճ» ամսագրի 6-ից 9-րդ համարներում տպագրվում է Նիկոլ Աղբալյանի ուսումնասիրությունը, որը, Խանյանի կարծիքով բացառիկ խորքային ու հանգամանալից ուսումնասիրություն է՝ նվիրված աշխարհահռչակ գրական քննադատին:

Ռուս հեղափոխական-դեմոկրատների աստղաբույլից Կ. Խանյանն իր ուսումնասիրության մեջ առանձնացրել է Ն. Ա. Դոբրոլյուբովին եւ Ն. Գ. Չերնիշևսկուն, որոնք «ձեռնոց են նետել» ցարիզմին, անհաշտ պաշքարի ելել միապետական կարգերի, չինովնիկության, խավարամոլության դեմ: 1860-ական թթ. սկսած Դոբրոլյուբովի գրական-քննադատական, քաղաքական-պատմական երկերն սկսում են տպագրվել հայ մամուլում: Կ. Խանյանը ուշադրություն է հրավիրում հատկապես մանկավարժական թեքում ունեցող «Հայկական աշխարհ» ամսագրի վրա, որը, նախ 1867 թ. իր էջերում տպագրել է Դոբրոլյուբովի «Հայր Ալեքսանդր Գավալցյանի եւ նորա քարոզները», իսկ 1868—1869 թթ.՝ «Քանի մի խօսք դաստիարակութեան վերայ» աշխատությունները: Դոբրոլյուբովի եւ Բելինսկու բարերար ազդեցությունը դրսևորվել է նաեւ Րաֆֆու՝ 1883 թ.

«Մեղու Հայաստանի» թերթի եւ նրա գրախոս Հայկունու միջեւ եղած բանավեճում: Պատմական վեպի ժանրային առանձնահատկությունների եւ հասարակական նշանակության մասին խոսելիս Րաֆֆին միշտ դիմել է ռուս երկու նշանավոր գործիչների գրականագիտական հայացքներին: Կ. Խանյանը ներկայացրել է նաեւ «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու, թարգմանիչ, գրաքննադատ Երվանդ Ղազարյանի, Հ. Հովհաննիսյանի, Շիրվանզադեի, «Մուրճ» ամսագրի խմբագիր, հրապարակախոս Ավետիք Արասխանյանի՝ ռուսական գրական քննադատության մասին հայացքներին: Դոբրոլյուբովի հիշատակին նվիրված գյուղագիր Արշակ Ագապեանի հոդվածը Կ. Խանյանը համարում է ռուս հեղափոխական-դեմոկրատին նվիրված առաջին հաջողված գրական դիմանկարը:

Իրենց սրբազան ազատագրական պայքարում Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդները՝ այդ թվում հայերը, իրենց պայքարի ղեկավար էին համարում Ն. Գ. Չերնիշևսկուն: Թիֆլիսում Թումանով եղբայրների հրատարակած «Новое обозрение» թերթը վկայում է Պետերբուրգի համալսարանի կովկասցի ուսանողների եւ Չերնիշևսկու անմիջական կապերի մասին: Կ. Խանյանը Չերնիշևսկու, ինչպես եւ Դոբրոլյուբովի ու Նեկրասովի խմբագրած «Սովրեմենիկ» օրագրի բացառիկ ազդեցությունը հայ երիտասարդ-հեղափոխականների վրա ցույց տալու համար բերում է հայ-ռուսական գրական կապերի նշանավոր ուսումնասիրող Գուրգեն Հովնանի «Ռուս-հայ գրական կապերը: XIX–XX դարերում» գրքում արձանագրված փաստերը: Չերնիշևսկու մահվան առթիվ հայ մամուլում տպագրված հոդվածները եւս ընդգծում են Նիկոլայ Գավրիլովիչի հանդեպ հայ հասարակական մտքի դրական վերաբերմունքը:

Աշխատության վերջին գլուխը նվիրված է հայ գրական քննադատության առաջամարտիկ, բանաստեղծ, հասարակական գործիչ Միքայել Նալբանդյանին եւ նրա քաղաքական հայացքներին: Հեղինակը ԺԹ. դարի հայ-ռուսական կապերի տարեգրության մեջ փայլուն էջ է համարում Միքայել Նալբանդյանի, Ալեքսանդր Գերցենի եւ Նիկոլայ Օգարեւի բարեկամությունը եւ մանրամասներ է ներկայացնում այս գործիչների նամակագրության, ընդհանուր գաղափարների եւ գործունեության մասին: Կ. Խանյանը փաստում է, որ հայ գործիչների սերն ու հարգանքը ռուս առաջադեմ մտավորականների նկատմամբ միակողմանի բնույթ չի կրել, այլ եղել է փոխադարձ՝ առնչված հայ եւ ռուս ժողովուրդների ազնիվ համերաշխությանն ու բարեկամությանը:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Կարեն Խանյանի՝ «Ռուսական գրական քննադատությունը XIX դարի հայ քննադատական մտքի գնահատմամբ» գիրքը, որ լույս է ընծայվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ, պրոֆեսոր Աելիտա Դուրխանյանի խմբագրությամբ, նոր էջ է բացում հայ-ռուս գրական կապերին նվիրված ուսումնասիրությունների շարքում եւ օգտակար կարող է լինել տվյալ ոլորտը հետազոտողների, մանկավարժների, ինչպես նաեւ ուսանողության համար:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՄՀ

